

ՌԱՊԴԱՐԱԿՈՒՄ

ԴԱՐՈՒՅՑ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Դադունական գիլությունների դոկտոր

«ՎԱՄ ԱՌՈՒՐՆ ԿԻՐԱԿԵՒ» ԾԱՌԻ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՎՐԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՉԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Եվսեբիոս եպս. Աղեքսանդրացու անունով պահպանված «Վասն առուն Կիրակէի պատուելոյ» ճառը վաղմիջնադարյան հունական բարոյախրատական այն հուշարձանների թվին է պատկանում, որոնց մեջ փորձ է արվում հավատացյալներին ևս պահել կիրակի օրը երգ ու պարի, զվարճանքի տրվելու հետանոսական կենցաղավարությունից: Նման համեմիտությունները, որ շարունակում էին զբաղեցնել ամսիկ թատրոնի նորօրյա երկրություններին, հայտնի են նաև եկեղեցական մատենագրության այլ ժամերի ու հետինականների երկերից (Ս. Թեկոյի վարք, Հովհան Ոսկեբերանի, Բարսեղ Կեսարացու և Հովհան Մանդակունու ճառեր և այլն):

Եվսեբիոսի ճառը շարադրված է հարցուապատասխանի մատչելի սկսվածքով՝ միմյանց հակադրելով թատրոնի և եկեղեցու կոչվածությունը: Խաղիրը, ինչպես երևում է, հավասարապես մտահոգել է հելլենիզմի ոլորտ ընդգրկված Այսրկովկասի հասարակություններին, Քրիստոնյա Արևելքի հյուսիս-արևելյան բազուկը ներկայացնող Հայքին ու Վիրքին (հարկավ նաև Աղվանքին), ուստի և վաղմիջնադարում այդ ճառը թարգմանվել է հայերեն և վրացերեն: Երեք տասնամյակ առաջ «Վասն առուն Կիրակէւ» ճառի հունարեն բնագրի (PG, 86, 1, col. 297-309) և նրա վերոհիշյալ երկու թարգմանությունների համեմատական ուսումնասիրությամբ և նրանց լատիներեն թարգմանությամբ զբաղվեց Քրիստոնյա Արևելքի մատենագրությունների ներկուն մասնագետ, Ազգաթանգեղոսի Պատմության հունարեն թարգմանության գիտական բնագրի կազմող ու բննարկող, այժմ հանգույցալ Գի Լաֆոնտենը¹:

Գիտնականը ճառի հայերեն բնագիրը հրապարակելիս ձեռքի տակ ունեցել է Վենետիկի Միջթարյան հավաքօնի N 265 զրչագիրը և տեղյակ եղել Երևանի Մատենադարանի N 639 ձեռագրի ընդորինակությամբ: Եթե զանց առնենք մի քանի անհաջող բառանշատումներն ու իմաստավորումները (կազմիլայ զմի, մեղլմէջ, լալոյլիսադլալոյ, ինքնակամլինքնական, այլ որխալլաք, ջան եղեալլաջանեղեալ, զի ոչլզիու և այլն), ընթանուր առմամբ պատշաճ հրատարակություն է: Վրացերեն բնագիրը վերարտադրված չէ, քանի որ այն արդեն հրատարակվել էր Թ. Շղննիայի կողմից², սակայն հայկական և վրացական

¹ G.Lafontaine, "Sur le Dimanche" d' "Eusébe d'Alexandrie" version arménienne et version géorgienne, "Le Muséon".- Revue d'études Orientales, t.LXXXVII, fasc. 1-2(1974), pp.23-44.

² «ԵղցնաՇըրտա օնսը. Թոամծց», Ը. II, տ. 1, 1960.

տարբերակների համեմատական ուսումնափրությունը լիարժեք դարձելու համար Գ. Լաֆոնտենը կատարել է նաև վրացերենի լատիներեն թարգմանություն:

Ներածական ուսումնափրության մեջ հրատարակիչը նկատելի ամփոփությամբ անդրադարձել է հայերեն և վրացերեն թարգմանությունների առնչությանը: Հարադրավոր բայերի առկայությունը հայերենում (կաց և մնա, կայ և մնայ, կան և մնան, մատիր և հաղորդիր և ան) և նրանց հմանատիպ փոխանցումը վրացերենում, մի քանի ոճական պատճենումները (ի վեր հայիլ և տեսնելի, ի վեր հայիլ և հանզելի) և «արեգակն»-ի դիմաց «մզիսթուալի» (արևի ակ) ունենալը բավարար հիմք են ծառայել եզրակացնելու, թե բնագրական բավականաչափ տարբերություններ ունեցող վրացական խմբագրությունը, այնուամենայնիվ, թարգմանված է հայերենից: Գ. Լաֆոնտենը միաժամանակ հանգամանալի բնագրագիտական ու աղբյուրագիտական քննության է ենթարկում նաև հումարեն բնագիրը:

Գ. Լաֆոնտենի հրապարակումից մեկ տարի անց, վրացական միջնադարյան ճառընդիր մենագրական ուսումնափրության առիթով Եվսեբիոս Սուեբանդրացու «Վաս աւուրդ Կիրակի» ճառի առկա խմբագրությունների փոխանցության խնդրին անդրադարձավ այժմ հանգույցալ Մ. վաճ Էսբրուրը: Նա չի առարկում նախորդի եզրակացությանը, ասել է թե՝ ընդունում է վրացական «Կղարջյան ճառընտրի» (Կ. Կեկելիձեի անվ. Ձեռագրերի ինստ. Ա - 144, 78թ - 81թ) օրինակի հայերենից թարգմանված լինելը և զետեղում այն ճառընտրի ոչ ստուգ թարգմանությունների խմբում³:

1985 թ. Գ. Լաֆոնտենի՝ վրացերենը հայերենից թարգմանած լինելու եզրակացության հերքման փորձ կատարեց և ի նորո արծարծման ձեռնամոլու եղավ վրացի բնագրագետ Թամիլա Մզալորլիշվիլին: Նա ենթադրում է, որ վրացերենում հայկաբանություններ դիտված հարադրավոր ձևերը հավանաբար հաստոկ են եղել հունական չափանիված այն բնագրին, որից անկախաբար թարգմանվել են հայերենու վրացերենը: Ինչ վերաբերում է «արեգակ» բառի Ն. Մատի ժամանակներից դիտված վրացերեն «մզիսթուալի»-ի հայերենի հմանությամբ կազմված լինելուն, ապա այդպիսիք կան նաև պահիլավերենում, նոր պարսկերենում, արաբերենում և լատիներենում, ինչպես ցույց են տվել Գ. Կիլմովը ու Բ. Գիզի-Անիշվիլին, հետևաբար այն իբրև հայկաբանություն դիտվել չի կարող⁴: Ինչ վերաբերում է թարգմանության ժամանակին ու պարագաներին, Թ. Մզալորլիշվիլին վկայակոչում է հեթանոսական սովորությունների դեմ պայմանական անհրաժեշտությունը (որպիսիք են կիրակնօրյա զվարճությունները և հատկապես կանացի պարերը), տիեզերական ժողովների որոշումները, կանոնագրքերի սահմանումները, և եզրակացնում, որ A-144 ճառընտրի բովանդակած տարբերակը «խիստ վաղ ժամանակի է և խիստ մոտ է կանգնած իր հունարեն բնագրին, համեմայն դեպք՝ այս թարգմանությունը կատարված պիտի լինի մինչև VII դարը»⁵:

Հետազոտողը, ինչպես երևում է, իր եզրակացությունները համարում է ավարտական, ուստի «Կղարջյան ճառընտրի» ամբողջական հրատարակություն կատարելիս նույնությունը:

³ M. van Eshbroeck, Les plus anciens homiliares géorgiens, Louvain, 1975, p. 252.

⁴ տաճողած մջալուծություն, յշեցյա ալցյանցըցլու խայլուս ցնուծոցու յշտու տեխնոլոգիան վյարշութեածու-“մրացալութացու”, Ը. XI, տ., 1985, զշ. 13-23.

⁵ Նույն տեղում, էջ 19:

յամբ կրկնել է մինչ այդ հրատարակած հոդվածը⁶՝ մասամբ մեղմեղով «խիստ մոտ» և «խիստ վաղ» վեհութերը: Վարդապետական և հանդիպական տոների փոփոխությամբ հետազոտողը ջանում է սահմանել հունական PG տարրերակի և նրան մոտ կանգնած հայերեն թարգմանության երևան զարու ժամանակը՝ «մոտավորապես VIII – IX դարերում»: Այսպիսով, ըստ այդմ, փաստորեն, վրացական ճառընտիր մուծված օրինակը հունական այլ բնագիր նախօրինակ է ենթադրում, որից այն թարգմանված պիտի լինի մեկ-երկու դար առաջ:

Բնագրաքննական այս դրույթների մետք կարելի էր համաձայնվել և մերժել Գ. Լաֆոնտենի և Մ. վան Էսքրութի մետագոտությունների՝ հայկական և վրացական խմբագրությունների փոխանչությանը վերաբերող նզրակացությունները, եթե համոզված լինենինք, թե այդ բնագրերը իրար աղերսող բառազանային, ոճական ուրիշ կովանելու այլև չկամ: Բայց, ինչպես կարելի է համոզվել ստորև, ուշադրության չառնված որոշ կարևոր իրուություններ կամ հենց վրացական հնագույն ճառընտրական բնագրում:

1. Եռուոր Ռոմելնո-օցո մօցօցօս ոյցօթրոնեա, ռօմեց օօօլոնան? Ցյեսեմանօ քյցտանօ დա զմանօ დա ռերճանօ սայշմայոնօ, Ցյույլըցանօ քացյմօնանօ, քյցատա Ռոյցանօ, զոտարցա մյեյշըցտանօ դա շոյրու եռուոր, զոտարցա մյունցեսարտանօ (յլարչ. մրաց. 282-283).

Թարգմ. «Ասկ ովքեր թատրոն նե գնում ի՞նչ են տեսնում. Աերբողանք դիվական և ձայներ ու ճուռներ սատանալական, ծափունք ընկեցիկ, կանացի պարեր՝ իբրև սնուտյալներ, և ավելի իսկ՝ իբրև այսահարներ»:

Վրացերենում շոյրու եռուոր կապակցությունը (ավելի իսկ) ակնհայտ շարադրական – ոճական անհարթություն է ստեղծում, քանի որ «իսկ», «աակայն», «միայն» նշանակող եռուոր-ն գրոծածված է հայերենին հատուկ դարձվածքային կիրառությամբ և ետադաս (հմմտ. Ի. Աղյան իսկ): Այդ է պատճառը, որ լատիներենի թարգմանիչը ոժվարացել է իմաստը համազոր փոխանցել և առ քուս-ից հետո փակագծում ճշգրտել է՝ լոյօթօ. յօ magis autem (§19): Զարմանալի է, որ ոճական այդ անհարթությունը չի նկատել ճառընտիր մուծված բնագրի հրատարակիչը: Կարծում ենք, եռուոր-ի փոխարեն վրացերենում սպասելի էր -ցա կամ -մցա վերջածանցի գործածություն: Առկա հայերեն բնագրում վրացերենին համապատասխանող արտահայտության չգոյությունը բացատրելի է վրացերեն թարգմանվելուց հետո հայերենի կրած փոփոխությամբ: Պահպանված տարրերակում վերևում վկայակոչված վրացերենի դիմաց ունենք. «Զի՞նչ տեսանէ որ երթայ ի թեատրոնն. երզս դիսականս, ձայն գորովս, ծափս և ճշիւնս կանանց կաքաւեալս՝ մանաւանդ դիւահարեալս»:

2. Ցանցը շնանու նյըճ դա մյն արացոն օեուոր. քըյւսա յշրայյեսա ցանցը, մյն օեուոր Ռոմելնոմյ ցանցըշրեցօտա, Ռոմելնոմյ յենուոտա դա ծոծենուոտա, Ռոմելնոմյ եթշրուոտա դա ծեռծուոտա, դա Ռոմելնոմյ եթյենը դա շեթցնցը միցացետա մատոցն սայմիյը ծորութիւնս. դա ու քըյւսա սալմե Ռոյյեյը, ցինս Ցշշերօնցը, աժրց սրծոտ մյն մոօվոնօան. մջջըլնո յշրյեյը դա յաջացեցը վուոցեած աշուացնուած, դա յուցըլնոյը շցշնցընո դա շյյետշրոն դա լոյյելցյուլնո նեյնը դա արացոն մոցուցեածա մաս. դա օեմօնօս չմաք յնարօնսա, յուցըլուացը

⁶ “յլարչ. յլու մրացալուայո”, տե. 1991, ցը. 58-66.

յշտձամաց զյուղն մատու ծանությունուն և մշյացված մշն օմոցուն ոգոնո (ՁՅ. 282).

Թարգմ. «Ել հրապարակներ և այնտեղ ոչ ոք կտեսնես: Ել կիրակի օրը, այնտեղ կտեսնես ոմանց փամուռներով, ոմանց քնարով ու թմբուկով, ոմանց սրինգով, ծափով և նվազով, իսկ ոմանց նստում ու դիտում են իրենց նման չար գործողներին: Եվ թե որևէ տեղ կաքավում են կամ շուշպրում, շտապ սորում են այնտեղ հասնել: Քահանաները կոչմակում են և եկեղեցու կամչ քարոզում, և ամեններ անմիտներ ու անիրավները, դանդաղկոտները նստած են, և ոչ ոք է ընթացող: Եվ քնարի ձայն լսելիս ամենքը միասնաբար իրենց ոտքերն արձակում և անմիջապես այնտեղ են հայտնվում»:

Միշանդարյան հայերեն թարգմանությունը համեմատաբար կարճառու է. «Ել ի հրապարակն յալլում աւոր և ոչ զոք գտանես: Ել յատր կիրակէի և գտանես զոման փամուռն և ոմանց կայթինս և ճշինս. ոմանց նստին և դիտեն զնմանի իրենանց ի չարիսն. եթէ կանացիք ուրեք կաքաւեն՝ վաղվաղակի անդ ընթանան: Կոչէ քարոզն յեկեղեցին, և ամենքեան դանդաղել կամ և ոչ երթան: Եղն ձայն քնարի և փողի կամ կայթինք կաքաւելոյ՝ և ամենքեան թե արձակեալ անդ գտանին» (§ 8):

Ներկա դեպքում մեզ հիմնական զբաղեցնողը հայերենում բացակայող ցօնա մշյանշուրջ-ն է, որի առկայությունը սպասելի էր «եթէ կանայք ուրեք կաքաւեն կամ շուշպրեն» վաղվաղակի անդ ընթանան: Այս նույն տերմինի գործածության երկու դեպք ևս կա. Շառ արօսն ՛ռյշցանո օցո քյածառնո, անց ուշ օլյուցանո, ցօնա ուշ մշյանշուրջանո? Առամցը յուզյանո Խօնությունո արօսն- «Ի՞նչ են կանանց այդ կաքավումները կամ թե ծափերը և կամ թե շուշպրոբաները. Այս բոլորը չարիքներ են»: Մյուս գործածությունն այս է. օ՞ յոիօրշեցած քանի մոնա նշ Խօնությունու, մուցրածությունու, նշցա ՛ռյշցու քանի մոնցրածությունու, նշցա մշյանշուրջանու և մեռնությունու, առամցը գալությունու աեցությունու և մշյանշուրջանու - «Արդ ուրախացեք և խրախացեք այսու ոչ խաղով, հարբեցողությամբ, ոչ էլ կաքավելով ու փանդիռով, ոչ էլ շուշպրությամբ և երգեցողությամբ, այլ նոր շարականու ու հոգևոր երգով»:

Այսպիսով, գործածության երեք դեպքում ունենք մշյանշուրջանո, մշյանշուրջանու մշյանշուրջ, որոնցից անջատելով հավաքականության, հոգնակիի, հոլովական ու բայանվան ցուցիչները՝ կունենանք մշյանշուրջ (շուշպար-ի), որ նոր վրացերենում պարզապես «պար» է նշանակում (Յըյցա):

Ս.-Ս. Օրբելիամիի «Բառզրում» այն բերված է իբրև «սամա» տերմինի բացատրություն «պար շուշպարի», իսկ «պարի»-ն նրա իսկ մեկնաբանությամբ հայերեն է, որ նշանակում է «սամա»⁷: «Պար» և «շուշպար» տերմինների հայերենից փոխառյալ լինելը հայտնի է վաղուց և ստուգաբանված է ն. Մատի և Հ. Աճառյանի աշխատություններում⁸: Հոփիսիմյանց վկայաբանության «զպարսն պարել և զկաքաւան յորդորել» արտահայտությունը հին վրացերեն թարգմանության մեջ ընկալված է իբրև «պար ասել»,⁹ որ փաստորեն նույ-

⁷ Եյցեան-եան ործյանուն, տե՛նյայնուն, Ծ. IV, օմուեցա օ. ձեռյան մատուցում, տե., 1965 ց. 618; Ծ. IV₂, տե. 1966, ց. 38, 310.

⁸ Ստուգաբանությունն ու գրականությունը տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, IV. Երևան, 1974, էջ 54-56:

⁹ Պարույր Մուրադյան, Ազաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Երևան, 1982, էջ 54 / 55:

Անկան է, ինչ խորենացու «փամփամք երգէին», մանավանդ՝ «երգէր ձեռամբ»-ը (Բ. 63): Վերջին արտահայտության «Ավագում էր ձեռքերով» աշխարհաբար թարգմանությունը ստուգ չէ, այն պարել է Հշանակում, ինչ վերաբերում է «Չուշպարի» առաջին բաղադրիչին «Չուշ», այն հայերեն «Չուրչ»-ի հնցյունափոխված տեսքն է, ուստի «Չուշպարի»-ն նույն հայ. «Չուշպար» է, երբ պարում են շրջան կազմելով և սովորաբար իրենք էլ երգում են: Վրացերենում այն կոչվում է «փերխուլի»: Ուրեմն՝ վրացերեն թարգմանության մեջ այն հիրավի հայկաբանություն է:

Զպիտի զարմանալ, որ հին վրացերենում գործածված ենք գտնում նոյն շրջանի հայկական գրավոր աղբյուրներում չարձանագրված «շուրջպար» տերմինը: Այդ նոյնը կատարվել է հայերեն «քարտուն» (անձավային բնակարան) տերմինի հետ, որ գործածված ենք գտնում XIII դարի վրացերեն տեքստում¹⁰: Հայերենն իր հերթին գրավոր ավամություն պահպանել է վրացերենից փոխառյալ «ձեղուն» (մյուղօցձնօ) բառը, ինչը չի պահպանել գրական վրացերենը¹¹:

Մեր վկայակոչած հայկաբանությունները, կարծում ենք, էապես լրացնում են Գ. Լաֆնուտենի բերած կովանները և հավատում երա եղրակացության պատճառաբանվածությունը՝ հայերենը թարգմանված է հունարենից (PG, 86, 1, col. 297-309), իսկ վրացերենը՝ պայօպվա մեզ ծանոթ բնագրից մասսամբ տարբերվող հայերեն խմբագրությունից:

Նորից հիշենք, որ Կիրակի օրվա խնդիրը իր մեջ ներառում էր արարշագործության օրվանից մինչև Քրիստոսի ծնունդն ու հարությունը շարունակվող բազմաթիվ պայմանական ստուգագրություններ, հետևաբար այն միայն ծիսական չէ, այլ նաև քրիստոսաբանական: Պատահական չէ, որ այդ օրվան է նվիրված նաև Հովհան Ուկերերանի անոնց հայտնի մի ճառ, որի հայերեն թարգմանությունը կատարված պիտի լինի Կիլիկյան շրջանի մատենագիրների միջավայրում¹²:

Այսուեղ նոյնպես հակադրվում են անտիկ շրջանից եկող թատրոնն ու նրա արարողական ձևի մեջ միանգամայն նոր բովանդակություն դրած եկեղեցին: Ահա մի վկայակոչում ժողովողական այդ նոյն տոնախմբությունը ներկայացնող դրվագից «... զի չէ հրամայել Աստուած ... կամ շատ արքենալ յաւոր կիրակէի, կամ երթալ ի տուն բարեկամի, կամ յազգականի, այլ ի լեկեղեցի, կամ երթալ ի տուն գուսանի, կամ ի տուն խաղոյ վասն ուրախութեան, զի դիաց տուն կոչի գուսանն, զի մեղքն յաշխարհն ուտեղով և ըմբեղով և ուրախանալովն եմուտ...» (տե՛ս Մատ. ձեռ. 639, էջ 316ա - 317ա):

Հովհ. Ուկերերանի անոնց պահպանված այս ճառը չգտնվեց նրա գործերի հայերեն թարգմանությունների հատորներում, ուստի անհրաժեշտ նկատեցնենք, հրատարակել այն իրեն հավելված (Ձեռագրական ընթերցումները ներկայացվում են նոյնությամբ):

¹⁰ «յարտածու ընեղցրցձա», և. յաշենոնցուծու ցամոցքմա. Ծ. II, ոժ., 1959, զ. 100, 101, 610.

¹¹ Տերմին մասին տե՛ս օ. Ճաշողածց, յարտածություն և նոմեցրո և օճյոցձնո: մյուղօցձնօ, և այլ եական մասին մասմածց, Ծ. XIX-A - XXI-B, ոժ., 1957, զ. 165-168.

¹² Մատենադարամի ձեռ N 639, էջ 314ր - 319ա: Դատեղով սկզբանողերից, նոյնական չէ Գ. Զարբանայական հիշատակած «Խաւաք վասն կեցուցի կիրակէին տամի, և լեկեղոց բազմութիւն և թէ ամենմական չէ պարտ երդուու ճառի հետ (Գ. Զարբանայան, Հայկական թարգմանութիւնը մայննեաց, Վեմետիկ, 1889, էջ 603-604):

Ձեռ. Մ. 639

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԻՔԵՐԱՆԻՆ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ԿԻՐԱԿԵՒԻ

Զգուշութեամբ պահելով զար կիրակեի, աստուածակը ժողովուրդը, երիտասարդը և կուսանք, ծերը և տղայք, յուտով և հաւատով պատուեցէք և սիրեցէք զաղքատն ողորմածութեամբ վասն Քրիստոսի սիրոյն և ձեր հոգուոյ փրկութեան յաւոր անկաշառ դատաստանին, զի Աստուծոյ անունն Կիրակի է, և որ զկիրակ(315ա)էն արհամարիէ կամ փոքր կարծէ՝ զԱստուած արհամարիէ, զի կիրակէ համբարձաւ Անմահն յերկինս յառաջ քան զյախտեան: Դարձեալ վասն սիրոյ սկիզբն եղև վասն արարչութեան Աստուծոյ:

Կիրակէ նոյ զտապանն շիմեաց և եկն ջրիեղեն: Ի կիրակէ ելա նոյ ի տապանէն, ի կիրակէ մատուցին զընճալս ի սուրբ և յանարատ անասնիցն: Ի կիրակէի խաւեցաւ Աստուծուած ընն Աքքահամու, ի կիրակէ կործանեաց զՍողոն և զԳոմոր վասն մեղաց իրեանց: Ի կիրակէի Յովհանն մարզարէն քրողեաց Նիմուացոցն և անցոյց զբարկութիւն Աստուծոյ ի ձեռն ապաշխարութեան: Ի կիրակէի եղև թողութիւն մեղաց Դափիթ մարզարէն ի ձեռն ապաշխարութեան, ելա Յովհանն ի փորոց կետին: Ի կիրակէի ազատեցաւ Յոր երանելին ի բերանոյ որդանցն, ի կիրակէի ապրեցաւ Դափիթ մարզարէն ի բերանոյ առիծոյն, ի կիրակէի ապրեցան Երեք մանկունքն ի հնոցին, ի կիրակէի ելա սուրբ Գրիգոր ի խոր վիրապէն և ազատեաց զթագաւորն ի խոզացելոյն զՖրդատ: Ի կիրակէի պապանձեցաւ Զաքարի(315բ)այ ի հրշտակէն, ի կիրակէի խաւեցաւ հրշտակն և Երեք զաւետիս Կուտին: Ի կիրակէի յարեաւ Քրիստոս ի մեռելոց, ի կիրակէի աւերեաց զդժոխքն և կապեաց զատանալի] ի յայն լուծ կապանս և ազատեաց զինն հազար տարու զմեռեալսն հողիքն, որ բռնել էր և կու չարչարէր սատանայ: Ի կիրակէի զալոց է դատել զկենդանիս և զմեռեալս, ի կիրակէին լիմելոց է ամեղ դատաստան: Ի կիրակէի հանգեաւ Աստուծ յամենայն զործոց իրոց և մեզ հանգիստ շնորհեաց և ասաց իր սուրբ բերանովն, թէ Որ զկիրակէն արհամարիէ՝ զԱստուած արհամարիէ, զի զրեալ է յԱռաքելական կանոնքն, թէ անհօնալ է այն մարդն, որ ի կիրակէի բան առնէ*:

Մերը և երիտասարդը, մեծ և փոքր ի շաբաթ աւոր ի յիններորդ ժամու հանգիստ է, որ բան չառնեն մարդոյ և անասնոյ, ծառալլի] և մշակի: Ի եկեղեցի երթան, և որ ոչ երթալլ] յեկեղեցին՝ չէ կատարեալ քրիստոնեայ և չունի մասն ընդ Քրիստոսի և ոչ յարութեան ակն ունի, զի Քրիստոս ասաց, թէ Ունիք ձեզ վեց ար շաբաթու զործել և կիրակ(316բ)էն հանգչել, և որ ի կիրակի ողորմի և աղքատին բան տա՛ զեզն կամ զէշ և այլ զին և իցէ, չունի վարձ յԱստուծոյ և արհամարիէ զԱռաքելական կանոնքն և պատառէ զցանն արինացն հայրենական սուրբ հայրապետացն և սուրբ առաքելոցն, զի զրեալ է Աստուած մի՛ դմել լուծ եզինն և մի՛ համեստ իշոյ, և մի՛ սանձն ձիոյ, և մի՛ ճանապարհ երթալ, զի չէ բարի: Մի յարտ երթալ ի տես, զի պարաքայն վերանալլ], և մի՛ յայցի, զի պտուղն չորանալլ] և մի՛ այլ

* Հմտ. Կանոնք Լատողիկեայ, ԻԹ:

ինչ բան առներ, այլ միայն աղաքեղ, զի չէ հրաման (sic) Աստուած զատել յեկեղեցւոյն յատր կիրակէի կամ շատ ուտել, կամ շատ արբենալ յատր կիրակէի, կամ երթալ ի տու քարենամի, կամ յազգականի, այլ ի յեկեղեցի, կամ երթալ ի տուն գուասնի, կամ ի տուն խաղոյ վասն ուրախութեան, զի դիւաց տուն կոչի գուասն, զի մեղքն յաշխարհն ուտեղով և ըմբեղով և ուրախանալովն ենուու:

Եւ ամենայն ցասումն՝ սովն, մահտարաժամն, ջրհեղեղն, կրակն, մորեխն, թոյթուրն, կարկուտն և այլ զին և իցէ ցասումն և պատահար ի (316թ) վերա[ի] աշխարհի որ կուզայ ի կիրակէից բանեա է, և յուտեղոյն և խմելոյն շնութիւն բուսաւ և վաշխն և ամենայն տոկոսից և այլ զամենայն ինչ և իցէ որ մարդ իմանալի՝ ուտելն և շնալն, զրկելն և ատելն զընկերն և զամենայն ցասումն բերէ սատանա[ի], և մարդուս առնելիքն որ և վերացաւ ամենայն իրաց պարաքայն աշխարհիւն վասն մարդոյ անհնազանդութեան, զի Յոհան կու հրաման (sic) Աստուծոյ բերանովն, զի սատանա[ի] և ամենայն դեք կալով զան ի շորջ զգուսանն խնդրեն և տուն և բնակարան շինեն իրեւանցն և ուրախանան և շատանան և հանգչին ի մարմին և ի հոգին մարդկան և ժողովն զրոյածնեալքս ի յԱրամա[ի] մինչև ի վերշին մարդն և հանեն յԱստուծոյ: Եւ դարձեալ ասեն, թէ ողբա[ի] մեծ սզով ամենայն եկեղեցի կորատեան ժողովրդեանն, զի սատանայ տանի ի խաւարն արտաքին, զի ան եղիցի լալ և կրծել ատամանց, զի կինն և գուասն և զինին խաղալիք են և մեծ զէն դիւաց և առիջ սատանայի:

Աղաչեմ զամենենեան փախերուք ի սատանա[ի]է, երկերուք Աստուծոյ և յամենայն սրբոց (317ա) նորա և մի երթալք ի Բետ չարին, այլ զնացէք յեկեղեցին, ուր Քրիստոս և իր սուրբքն են և ամդ աղաքեցէք և զմեղքն թողէք խոստովանութեամբ, հաղորդեցէք, զմիմեանս սիրեցէք, և զուտոն և զիշոցքն թողէք, որ զլուկն է ամենայն մեղաց: Զի Քրիստոս կու հրաման[ի]է, թէ Ամենայն մեղք թողցի մարդկան, բայց որ զՀոգին սուրբ հայրոյէ՝ մի թողցի մի՛ յայս աշխարհիս, մի՛ հանդերձեալ ալրմ*: Աղաչեմ ձեզ, ով եղբարք, զի կիրակէն սուր է երկու բերամի՝ մեծ ի յաջոյ հարկանէ և ի ձախոյ կտրէ և ի խաւարն արտաքին տանի: Եւ որ զկիրակէն սիրէ և պատվէ (sic) ի նժոխս ոչ իշանէ և ի սպանալեացն ոչ երկաչի, այլ ի զոգն Աբրահամու հանգչի և յամենայն մեղաց ազատի և որ զզիրս կարդա[ի] կամ այլոց ուսուցանէ՝ զփառս ի Քրիստոսէ առցէ, ամէն:

Ընդ Ամին և զիս՝ զանպիտան և զմեղալք լցեալս և
ի բարի գործոցս ապիկարս աղաչեմ յիշել զձեզ, յորժամ
կարդալք կամ արինակէք թողութիւն խնդրեցէք և ինձ
մեղապարտիս Յովհաննէս սուտանուն քարանայի, և
Տէրն և արարիչն ամենայնի յորժամ զայցէ ի յիւր միս
անզամ զալուստն և զձեր անցեալսն ոչ յիշէ, ամէն:
Գրեցաւ ի թվ. ՊԾՀ [1409] ի փառս Աստուծոյ: